



Բոտուլոտոքսին. Անհրաժեշտ փաստեր հիվանդների համար

ԻՆՉ Է ԱՅՆ

Բոտուլինային նեյրոտոքսինը (ԲոՆՏ) բնական սպիտակուց է, որն արտադրվում է *Clostridium botulinum* մանրէի կողմից: Անցյալում մարդիք գիտեին միայն ԲոՆՏ-ի վտանգավոր և սարսափելի թույն լինելու մասին: Երբ ԲոՆՏ-ով աղտոտվում է սնունդը, այն կարող է առաջացնել բոտուլիզմ՝ ծանր հիվանդություն, հավանական մահվան ելքով: Այնուամենայնիվ, վերջին 40 տարվա ընթացքում գիտնականները վերափոխել են այս թույնը բազմաթիվ հիվանդությունների բուժման համար արդյունավետ և ապահով դեղամիջոցի, երբ այն օգտագործվում է ճիշտ դեղաչափերով:

ԻՆՉՊԵՍ Է ԱՅՆ ԱՇԽԱՏՈՒՄ

Բուժման ժամանակ ԲոՆՏ-ը պետք է ներարկվի մկանի կամ գեղձի մեջ: ԲոՆՏ-ը կլանվում է նյարդային վերջավորություններով և պաշարում նյարդից մկան կամ նյարդից գեղձ ազդակները: Դա առաջացնում է մկանի թուլություն կամ գեղձից թթի կամ քրտինքի արտադրության նվազում:

Հիվանդների համար այժմ օգտագործվում է ԲոՆՏ-ի 2 տեսակ՝ A և B տիպերը: Կախված Ձեր ապրելու երկրից, կարող են հասանելի լինել տարբեր տեսակները.

- A տիպը.
 - Օնաբոտուլոտոքսին A,
 - Աբոբոտուլոտոքսին A,
 - Ինկոբոտուլոտոքսին A:
- B տիպը.
 - Ռիմաբոտուլոտոքսին B

ԲոՆՏ-ի դեղամիջոցները կարող են ունենալ տարբեր ուժգնություն և ներարկումից հետո հյուսվածքներում տարածվելու ունակություն: Նրանք հիմնականում նույն ճանապարհով են գործում և ունեն նույնամանակ ազդեցություն մկանի կամ գեղձի վրա: Այնուամենայնիվ, այս դեղերը չեն կարող ամբողջապես փոխոթինել իրար: Դեղաչափերը տարբերվում են ամեն դեղի համար, այսպիսով բժիշկները պետք է օգտագործեն տվյալ դեղի համար ճիշտ դեղաչափ:

Դեղը սկսում է աշխատել ներարկումից 2-ից 7 օր անց: Դեղի առավելագույն ազդեցությունը է նկատվում է մոտավորապես 2 շաբաթ անց և, այնուհետև, աստիճանաբար թուլանում է: Քանի որ ազդեցությունը ժամանակավոր է, ԲոՆՏ-ի ներարկումները պետք է


կրկնվեն մոտավորապես ամեն 3-ից 6 ամիսը մեկ: Ներարկումները 3 ամսից ավելի հաճախ չեն կատարվում՝ օրգանիզմի կողմից դեղամիջոցի անընկալությունից խուսափելու համար:

Ո՞Ր ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԵԼԻ Է ԲՈՒԺԵԼ ԲՈՏՈՒԼՈՏՈՔՍԻՆՈՎ

Առաջին անգամ ԲոՆՏ-ն օգտագործվել է ակնաբույժների կողմից որպես աչքերի շլության վիրահատական բուժման այլընտրանք: Այնուհետև նյարդաբանները սկսեցին ԲոՆՏ-ն օգտագործել շարժողական խանգարումների՝ օրինակ դիստոնիայի, ժամանակ առաջացած արտահայտված մկանային կծկումների համար: Շատ հիվանդությունների համար չի եղել որևէ այլ բուժում:

ԲոՆՏ-ը արդյունավետ է հետևյալ հիվանդությունների ժամանակ.

1. Դիստոնիա. ակամա մկանային սպազմեր կամ կծկումներ, որոնք առաջացնում են պտույտի կամ կարճ ցնցման նման շարժումներ կամ մարմնի անսովոր դիրքեր.
 - պարանոցային դիստոնիա (տորտիկոլիս), երբ պարանոցի մկանների կծկումներն առաջացնում են գլխի ոչ նորմալ թեքում կամ պտույտ,
 - հաճախակի թարթել կամ աչքի կծկումներ (բլեֆարոսպազմ),
 - ծնոտի և դեմքի ստորին կեսի շարժումներ (օրոմանդիբուլյար դիստոնիա),
 - ձայնալարերի կծկումներ (լարինգեալ դիստոնիա կամ սպազմոդիկ դիսֆոնիա),
 - ձեռքի կամ բազկի դիստոնիա, օրինակ գրողի սպազմ:
2. Հեմիֆացիալ սպազմ. աչքին հարակից կամ դեմքի կեսի մկանների թրթռոց:
3. Սպաստիկություն. այս վիճակն առաջացնում է մկանային կծկումներ և բարձր մկանային տոնուս ուղեղային պարալիզի ժամանակ, ինսուլտից հետո, ողնուղեղային փսապածքի կամ ցրված սկլերոզի ժամանակ:
4. Գերքրտնարտադրություն կամ հիպերհիդրոզ. ախտահարում է ձեռքերի ավերը կամ թևատակերը և կարգավորվում է մաշկի մեջ կատարվող ներարկումներից հետո:



Բոտուլոտոքսին. Անհրաժեշտ փաստեր հիվանդների համար

5. Այլ հիվանդություններ, որոնց կարող են օգնել ԲոՆՏ-ի ներարկումները.
- գլխի, ձեռքերի և ձայնի դող,
 - տիկեր,
 - թքահոսություն (սիալորեա) Պարկինսոնի հիվանդություն կամ կողմնաչափ ամիոտրոֆիկ սկլերոզ ունեցող հիվանդների մոտ,
 - հիպերակտիվ միզապարկ,
 - խրոնիկական միգրենի գլխացավեր:

ԱՐԴՅՈՒՔ ԱՅՆ ԱՆՎՏԱՆԳ Է

Չնայած նրան, որ ԲոՆՏ-ը թույն է, պատշաճ դեղաչափերով և ճիշտ տեղակայումով ներարկումները անվտանգ են և արդյունավետ: Ամենատարածված կողմնակի ազդեցությունը ներարկման տեղին մոտ մկանային թուլությունն է: Օրինակ, երբ ներարկումը կատարվում է աչքի շուրջ, կարող է կախվել կոպը կամ առաջանալ երկտեսություն: Այլ կողմնակի ազդեցություններից են ներարկման տեղում ցավը, կապտուկը կամ արնահոսությունը: Շատ հազվադեպ ԲոՆՏ-ի ներարկումները կարող են առաջացնել ընդհանուր թուլություն կամ գրիպի նման ախտանիշներ: ԲոՆՏ-ի ներարկումները պետք է իրականացվեն փորձառու վերապատրաստված մասնագետի կողմից:

ԻՆՉ ԿԱՐՈՂ ԵՄ ԵՄ ԱՎՆԿԱԼԵԼ ԲՈՆՏ-ՈՎ ԲՈՒԺՈՒՄԻՑ

ԲոՆՏ-ը շատ արդյունավետ դեղամիջոց է և կարելի է ակնկալել 50-60% լավացում առնվազն 2-ից 3 ամիս տևողությամբ: Եթե ներարկումներն արդյունավետ չեն, ապա կարելի է փոխել դեղաչափը կամ ներարկման տեղը: